



Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshtyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961

www.gta.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ բաժնետերերին և խորհրդին,

Մենք ստուգել ենք «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Ընկերության՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտների:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության, և 2010թ. ապրիլի 21 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Ընկերության ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:


2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք

հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդադյան
Տնօրեն/քաժնետեր

21 ապրիլի, 2010թ.

ք. Երևան



Արեն Աղաջանյան
Աուդիտոր

